

# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

## ԱՆՇԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ալաշկերտի բարբառն ունի խոսվածքային երկու հիմնական տարբերակ՝ բուն Ալաշկերտի և Բագավանի, որոնք թեև ունեն հնչյունական և քերականական որոշ տարբերություններ, սակայն հիմնականում նույնն են ու միավորվում՝ կազմելով բարբառային մեկ ամբողջություն:

Բուն Ալաշկերտի խոսվածքում (Շերիանի հովտի բնակավայրեր՝ Խաստուր, Թոփրակ-Վալե (Վաղարշակերտ), Չլկանի, Խոշիան, Ջետկան, Մոլլա-Սուլեյման, Խաչլու և այլն), եմ (իմ) խոնարհմանը զուգահեռ առկա է նաև սի(մ) կրկնադիր օժանդակ բայը, որը ծագել է հ.-ե. \*esmi բայից, իսկ պայմանական եղանակի գրական խոնարհման դեպքում կ (>կը, կ, գը, գ) նախդրային եղանակիչի փոխարեն երբեմն հանդես է գալիս սի (si) ետադիրը. Քննության առնենք դրանց ձևախմբատային և ձևաբանական դրսևորումները:

### 1. ՍԻ(Մ) SİM ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԸ

Սի(մ) օժանդակ բայը ունի հետևյալ դրսևորումները.

ա) եթե եմ (իմ)-ը հանդես է գալիս իբրև օժանդակ բայ, հանգույց և ինքնուրույն ստորոգյալ, ասլա սի (մ)-ը շունի այդ գործառությունները և խոսքի մեջ գործածվում է իբրև կրկնադիր օժանդակ բայ՝ դեմքով և թվով համաձայնվելով բուն բայ-ստորոգյալի հետ, բ) կազմում է հարադրական և համադրական ձևեր, գ) իբրև կրկնադիր օժանդակ բայ փոփոխություն է մտցնում եղանակային և ժամանակային ձևերի հարաբերություններում, դ) խախտում է բայական եղանակների ընդունված տարբերիչ գծերը՝ ապահովելով կրկնակի եղանակայնության (սահմանական+ըղձական, ըղձական+սահմանական, հարկադրական+սահմանական), զ) երկրորդ և երրորդ դեմքերով հանդես եկող բայաձևերը օժտում է առաջին դիմայնության հատկանիշով և նկատելիորեն ընդգծում խոսողի վերաբերմունքը, է) կորցնելով անորոշ դերբայի դերբայական հատկանիշը՝ ձեռք է բերել դերանվան ձևաբանական նշանակություն կամ վերածվել մասնիկի:

Համեմատության համար բերենք մի քանի օրինակ.

է

ա) եմ (իմ) սովորական

բ) սի(մ) կրկնադիր

1. Հըմա քըզի բ'ըննի, տուն կըտանիմ—Հենց քեզ բռնեցի, տուն կտանեմ (սահմանական):

2. Դու բըղի էրտե՞ր տուն — Դու պետք է գնայի՞ր տուն (հարկադրական):

1. Հըմա քըզի բ'ըննիմ սի, տուն կըտանիմ—Հենց քեզ բռնեցի+բռնեմ, տուն կտանեմ (սահմանական+ըղձական):

2. Դու բըղի էրտե՞ր սէյր տուն— Դու պետք է գնայիր+գնացի՞ր տուն (հարկադրական+սահմանական):

Մեր գրառած նյութերից կարող ենք բերել այլ օրինակներ ևս, սակայն դրանով նոր բան չենք ավելացնի սի(մ) օժանդակ բայի ձևաիմաստային և ձևաբանական դրսևորումների բացահայտման վրա: Բոլոր նախալուծությունների բայերն էլ մտնում են սահմանական-ըղծական, ըղծական-սահմանական, հարկադրական-ըղծական եղանակների վերը նշված կաղապարների մեջ:

Լեզվաբանությանը վաղուց հայտնի է, որ հնդեվրոպական նախալեզվի բայերի շարքում հիշվում է \*esmi-ն<sup>1</sup>, որից էլ ծագել է հայերենի եմ օժանդակ բայը: Այդ կարծիքին են եղել մեծ լեզվաբաններ Անտուան Մեյեն, Հրաչյա Աճառյանը և մյուս հնդեվրոպաբանները: Իսկ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆ. Ա. Աբրահամյանը \*esmi-ն համարել է անորոշ դերբայ և զետեղել համապատասխան ցանկում<sup>2</sup>: Հրաչյա Աճառյանը իր մի շարք աշխատություններում մանրակրկիտ քննության է առել դերանվան խոսքիմասային և ձևաիմաստային բոլոր դրսևորումները, տարբեր առիթներով անդրադարձել եմ, ես, է օժանդակ բայերի ծագմանը և հանգել հետևյալ եզրակացության. «Հայերենի լավագույն օժանդակ բայն է եմ, որ ծագում է հնիս. \*esmi ձևից. [վերջին 1 ձայնավորի անկումով և m ունգայինից առաջ s-ի անկումով, որ ընդհանուր կանոն է (հմմտ. \*oms > հյ. ուս)]: Երկրորդ դեմքն է ես, որ ծագում է հնիս. \*esi-ից = հն. ei, սնս. asi. բայց որովհետև s երկու ձայնավորների մեջ ընկնում է, ուստի Մեյեն ենթադրում է կրկնավոր s-ով ձևը՝ essi, որ համապատասխան է գալիս հ. լատ. ess և հոմերյան ἐσθι δακρυῖν (Esquise, 118): Եզակի Գ դեմքն է է, որ ծագում է հնիս. ésti ձևից՝ 1 վերջնահանգ ձայնավորի կորստով և s, t բաղաձայնների անկումով: Նույն վիճակին հասել են նաև ֆրանսերեն est և պրս. āst.—Ֆրանս. est ըստ դրության պահանջում է s և t բաղաձայնները, բայց հնչվում է միայն e, նմանապես պրս. āst զրականում պահել է նույն երկու բաղաձայնները, իսկ ժողովրդական բարբառով հնչվում է ā. «ո՞վ է», լինում է ֆրանսերեն qui est (ki-e) և ճիշտ նույն ձևով ժող. պրս. ki e»<sup>3</sup>:

Մեծ լեզվաբանը եմ բայի ստուգաբանությունը մի այլ առիթով համառոտել է այսպես. «+եմ էական բայ, խոնարհվում է՝ ներկ. եմ, ես, է, եմք, էք, են, անկ. էի, էիր, էր, էաք, էիք, էիք, հրամ. եր, երուք...»

Բնիկ հայ բառ՝ հնիս. es «լինել, գոյություն ունենալ» արմատից, որի ներկայ եզակի երեք դեմքերն էին ésmi > եմ, éssi > ես, essi > է»<sup>4</sup>:

Նույն կարծիքն է հայտնել նաև Գ. Ղափանցյանը: Նա այս առթիվ գրում է. «Հնդեվրոպական es «լինել» էական բայը պիտի տար es-mi, es-si, es-ti և այլ ձևերը, ինչպես որ կա մի շարք լեզուներում»:

1 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1941, էջ 46-ում հ.-ե. բայերի մեջ 197 համարի տակ նշված է եմ-ը \*esmi:

2 Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962, էջ 38:

3 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատություն 562 լեզուների, հ. 4, Բ գիրք, Երևան, 1961, էջ 53:

4 Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 25:

5 Տե՛ս Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961, էջ 280—281: Т. Барроу, Санскрит, М., 1976, стр. 287, ուր ասված է՝ «asmi I л. ед. ч. Первичн. скр. ásmi „я есть“, греч. ειμι, лит. esmi, хетт. esmi, émi „иду“.

Այսպիսով, հայագիտությունը վաղուց ի վեր պարզել է, որ եմ-ը ծաղել է հ.-ե. \*esmi բայից: Մեզ թվում է, որ Ալաշկերտի բարբառում հանդես եկող սի(մ) օժանդակ բայը ձևավորվել է \*esmi-ի հիմքի վրա: Ձևաբանական մակարդակում կատարված հնչյունական փոփոխությունները որոշակի են, և արդյունքում մնացել է ս արմատական հնչյունը, որին հաջորդող ե, ի, ա, ու լծորդների վրա ավելացել են մ, ս, նֆ, (մֆ), կ, ն մասնիկներ: Սրանք համապատասխանաբար տեղադրվելով ես, դու, նա, սա, դա, նա, ինչպես նաև այս, այդ, այն դերանունների վրա, միաձուլվելուց հետո տրոհվել են և վերածվել մասնիկների՝ անկախ՝ ս, դ, ն և ձայնավորի հենարան՝ իս, իդ, ին, ըս, ըդ, ըն կախյալ՝ ի(մ), ի(ս), ա||ն, որոնք հստակապես թեքություններում, դերբայական վերջավորություններում, դիմաթվանիշ ցուցիչներում, անձնական և ցուցական դերանունների հիմնահնչյուններում, ստացական հոդերի տեսքով՝ նախադիր և վերջադիր: Այս մասնիկներն առավել ակտիվ են դառնում, երբ նախորդում կամ հաջորդում են բայական լծորդներին և արագորեն միանում նրանց: Դրանք հարաշարժ և կախյալ մասնիկներ են, որոնք ստեղծում են մասնիկավոր բաղադրություններ:

Անձնական և անձնանիշ դերանունները (ցուցական, ստացական, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ և ժխտական) ենթակայի պաշտոնում ավելի են կախված ստորոգյալից, քան փոխարժեքայնություն ունեցող մյուս դերանունները: Դիմանիշ ցուցիչ ունեցող դերանունները խիստ մերձենում են ստորոգյալատկան ու բայասպասարկու բառերին և երբեմն ձուլվում նրանց հետ: Այսօրինակ դրսևորումները մեղ բերում են այն եզրակացություն, որ դերանունների որոշ տեսակների ծագումը կապվում է բայերի դերանվանական բաղադրիչների հետ, որոնցից մեկն էլ սի(մ)-ն է, որ առկա է Ալաշկերտի բարբառում:

Եմ/իմ և սի(մ) բայերը տրոհվելով \*esmi-ից, զարգացման որոշ շրջանում հանդես գալով կողք-կողքի և գործածվելով իբրև զուգահեռ ձևեր, անընդհատ փոխադրել են և երկրորդ փուլում տեղադրվել միմյանց վրա՝ միաձուլվել [սի(մ)+իմ=սիմ] ու, հնչյունական նոր որակ ձեռք բերելով, դերանվան տեսքով քարացել: Հաջորդ փուլում, կորցնելով դերանվանական անկախ դիրքը, դարձել են մասնիկներ: Փոփոխությունները տեղի են ունեցել հետևյալ հաջորդականությամբ՝ բայ→դերանուն→մասնիկներ (աղ. 1): Որ դերանունների տրոհումը տանում է դեպի անկախ դիրքի մթազնում, մասնիկավորում, ապացուցվում է հայերենի ս, դ, ն հոդերի զույգումներով: Դերանվան նման ձևափոխությունը ճիշտ է նկատել ակադ. Գ. Ղափանցյանը՝ գրելով. «Դերանունները ևս շատ ու շատ լեզուներում կոչվում են իրենց անկախ դիրքը և կցույթի դեր են ստանձնում մյուս բառերի նկատմամբ:

... Հայոց ս, դ, ն հոդերը միանգամայն կցորդներ են և շունեն որևէ դիսպոզիցիոն անկախություն և ինքնուրույնություն»<sup>6</sup>:

Ալաշկերտի բարբառում առկա si(m) օժանդակ բայը, լինելով հ.-ե. \*esmi/es-mi բայի հայերենում պահպանված առավել անխաթար տարբերակը, կրել է հետևյալ փոփոխությունները. ա) 1-ին դեմքի sim-ը ծագել է հ.-ե. \*esmi-ից, ապա s-ին նախորդող Ե-ն ընկել է, m-ն եզակի թվի 1-ին դեմքի

<sup>6</sup> Տե՛ս Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 199—200: 7 Հանդես, № 3

դիմաթվանիշ ցուցիչն է, որը, բնականաբար, պետք է հաջորդեր *i*-ին, արդյունքում ստացվել է *sim/սի(մ)*, բ) 2-րդ դեմքի *(s)is*-ը ծագել է հ.-հ. \**essi*-ից<sup>7</sup>, *s*-ին նախորդող *ē*-ն և *s*-երից մեկը ընկել են, արդյունքում մնացել է *(s)is* [*(ս)իս*], գ) 3-րդ դեմքի *sa||sā*-ն ծագել է հ.-հ. \**esti*-ից, որից մնացել է միայն *s* արմատական հնչյունը, իսկ վերջին *i*-ն հերթագայվել է *a* (*ä*)-ի:

Հ.-հ. \**esmi* բայի ձևափոխությունները բուն Ալաշկերտի խոսվածքում (աղ. 1)

| Պեմք | Հ.-հ.         | 1-ին փուլ                          | 2-րդ փուլ                       | 3-րդ փուլ                                     | ցուցիչներ                       | հոդք     |
|------|---------------|------------------------------------|---------------------------------|-----------------------------------------------|---------------------------------|----------|
|      |               | սիմ                                | իմ                              | զուգաձևություն                                |                                 |          |
| I    | * <i>esmi</i> | <i>սի(մ)-սինք(մք)</i>              | <i>իմ-ինք(մք)</i>               | <i>սի(մ)  իմ<br/>սինք  սինք(մք)</i>           | <i>մ, նք(մք)</i><br><i>ս</i>    | <i>ս</i> |
| II   | * <i>essi</i> | <i>(ս)իս-սիկ(ք)<br/>նաև՝ յր-յք</i> | <i>իս-սիկ(ք)<br/>նաև՝ յր-յք</i> | <i>(ս)իս  իս<br/>սիկ  իկ(ք)<br/>յր  յք</i>    | <i>ս, կ(ք)<br/>յր<br/>յք, դ</i> | <i>դ</i> |
| III  | * <i>esti</i> | <i>սա(ւս)-սին<br/>սէն</i>          | <i>ա(ւս)-ին<br/>էն</i>          | <i>սա(սւս)  ա(ւս)<br/>սին  ին<br/>սէն  էն</i> | <i>ա(ւս)<br/>ն</i>              | <i>ն</i> |

Հ.-հ. \**esmi* բայի՝ բուն Ալաշկերտի խոսվածքում կրած փոփոխությունները՝ օժանդակ բայ→դերանուն→մասնիկներ, բարբառային կղզիացած երեւիւթներ չեն, այլ իբրև մասնիկ կարող ենք գտնել հայերենի մի շարք բարբառներում, առանձնապես «ս» ձյուղի տարբերակներում, ինչպես նաև զրական հայերենի զարգացման բոլոր փուլերի՝ ձևաբանական մակարդակում տեղի ունեցած հնչյունական փոփոխություններում:

Սի(մ) օժանդակ բայն ունի ներկայի և անցյալի ձևեր: Ներկայի հիմքն է սի. որը ստանում է -մ, -ս, ա||ւ, -նֆ (մֆ), -կ, -ն դիմաթվանիշ ցուցիչները: Եզակի թվի 3-րդ դեմքի ի-ն հերթագայվում է ա||ւ-ի:

Անցյալի հիմքն է սէ, որի վրա ավելանում են յ (նֆ), յֆ, ֆ, նֆ (մֆ), յֆ, ն դիմաթվանիշ ցուցիչները:

Այս խոնարհմանը ենթարկվում են ներգործական, կրավորական և չեզոք սեռի այն բայերը, որոնք սովորաբար հանդես են գալիս անձնանիշ ենթակաների հետ և հատկանշում են միայն մարդու (անձ) կողմից կատարվող ոչ փոխաբերական գործողություն, ինչպես՝ ներգործական՝ կրգւրգիմ (սի(մ)), կրփօրիմ սի(մ), կրվարիմ սի(մ), կրֆանդւսւս. կրավորական՝ կրծէծվիմ սի(մ), գրգւրգվեւ սէ(յ)ր, կրթըկվեւ սէր, կրսվեւ սէր, չեզօք՝ գրվւգնիմ սի(մ), կրնըստի սիս, կէրտան սին, գրնասնի սիմ, գրմօդգրնամ սի(մ) և այլն:

Կրավորական սեռի բայաձևերն ավելի են նեղացնում սի(մ) խոնարհման ոլորտը, բունդակությունն պլանում թողնելով ավելի սահմանափակ չափա-

7 Գ. Ջահուկյանը հին վրացերենի *sen* («դու») և *swen* («դու») եզակի թվի բայական վերջավորության ծագումը բխցնում է հ.-հ. *-si*, *-s*-ից: Հմմտ. Դ. Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван, 1967, стр. 86, 87.

նիշներ՝ սուբյեկտի և օբյեկտի անձնանշություն, հենց որով էլ դործողությունը, այլ կերպ՝ բայ-ստորոգյալը բնականաբար դործածվում է այդ նշանակությամբ: Կրկնադիր սի(ս) բայի առկայության դեպքում դործողությունը լինում է իրական և ոչ իրական:

Իրական են համարվում այն դործողությունները, որոնք ոչ միայն ունեն անձնանիշ ենթակա (սուբյեկտ), այլև նույն արժույթն ունեցող կրող առարկա (օբյեկտ): Եվ եթե եմ (իմ) խոնարհման դեպքում ներգործական սեռի բայաձևերն ազատորեն կարելի է դարձնել կրավորական, ինչպես՝ փօրել-փօրվել, ֆանդել-ֆանդվել, վարել-վարվել, կօղբել-կօղբվել և այլն, ապա սի(մ) խոնարհումը չի խախտում իրականի սահմանները, ինչպես՝ գրգռվիմ-գրգռվի սի(մ), կրծեձվիմ-կրծեձվի սի(մ), գրվաբիմ-գրվաբվի սի(մ) և այլն:

Գործողությունը ոչ իրական է, եթե անձնանիշ ենթակային վերագրվում է իրանիշ կրող առարկա (օբյեկտ), ուրեմն՝ բայ-ստորոգյալն էլ անձնանիշ չէ, թեև գործողությունը կատարվում է անձնանիշ ենթակայի կողմից, ինչպես՝ կըրվաբվիմ սի(մ), գրվաբվիմ սի(մ): Կրավորական սեռի ոչ իրական գործողություն ցույց տվող բայաձևերը միադիմի են և հանդես են գալիս միայն 3-րդ դեմքով, որով էլ մերձենում են շեղոք սեռին: Եվ այսպես՝ ոչ իրական գործողություն արտահայտող կրավորական սեռի բայերը դուրս են գալիս սի(մ) խոնարհման ոլորտից:

Չեղոք սեռի բայերը նույնպես կարող են լինել իրական և ոչ իրական: Իրական (անձնանիշ) համարվող բայաձևերն ունեն ևրեք դեմք, իսկ իրանիշները՝ մեկ: Ոչ իրական գործողության ենթական սովորաբար լինում է ցուցական գերանվան 3-րդ դեմքը (իդա գօրվեց, ինա ֆանդվեց): Չեղոք սեռի բայերը ցույց են տալիս հետևանքային միջակ արտահայտող մի այնպիսի գործողություն, որն իր մեջ է ամփոփում և խտացնում առարկայի շարժման, դրություն, եղելություն, գործողության ժամանակավոր դադարի սեռային հատկանիշները, որոնք թաքնված են բայիմաստի մեջ, և արդյունքում մնում է օբյեկտ+գործողություն: Այսօրինակ դրսևորումները, որոնք կապված են ոչ միայն բայական բառույթների իմաստային առման, այլև քերականական հատկանիշների ձևավորման և սեռի քերականական կարգի հետ, մի անգամ ևս գալիս են հաստատելու, որ սի(ս)-ը դեռևս հայերենի նախագրաբարյան շրջանում կորցրել է անորոշ դերբայի իմաստը և դարձել բայի գերանվանական բաղադրության մասնիկ:

#### Սի(մ) խոնարհման համակարգը

Սի(մ) խոնարհումն ունի սահմանական եղանակի անկառաճ ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, բղձական ապառնի, բղձական անցյալ, հարկադրական ապառնի, հարկադրական անցյալ ժամանակային ձևերը, բացակայում են սահմանական եղանակի կատարելի ներկան, կատարելի անցյալը և անցյալ կատարյալը, որոնք գիտակցվում են եմ (իմ) խոնարհման բայաձևերից: Պայմանական եղանակը կաղմվում է ետադաս սի եղանակիչի օգնությամբ: Այս խոնարհումը չունի հրամայականի համապատասխան ձևեր:

Սի(մ) օժանդակ բայն ունի խոնարհման երկու ձև. 1) ներկա՝ սի(մ), սիս, սա||սա, սին(մ), սիկ, սին, 2) անցյալ՝ սէլ(ն), սէյք, սէ(ր), սէյն(մ), սէյֆ, սէն:

Սի(մ) խոնարհման ժամանականիշ վերջավորությունների պատկերը (աղ. 2)

| Խոնարհման<br>ժամանականիշ<br>վերջավորությունների<br>պատկերը | Գործիք | Կրկնագիր           |                   | Կրկնագիր                                     |                                |
|------------------------------------------------------------|--------|--------------------|-------------------|----------------------------------------------|--------------------------------|
|                                                            |        | Հարադրական         |                   | Համադրական                                   |                                |
|                                                            |        | Եզակի              | Հոգնակի           | Եզակի                                        | Հոգնակի                        |
| Սի(մ)<br>սիս, սա  սա,<br>սին(մ), սիկ,<br>սին               | I      | -իս սի(մ)          | -ինք(մք) սինք(մք) | -իս + սիս = սին                              | -ինք + սինք = սինք<br>(սիմք)   |
|                                                            | II     | -իս' սիս           | -իկ սիկ           | -իս + (ս)իս = (ս)իս                          | -իկ + սիկ = սիկ                |
|                                                            | III    | ա/ ա սա, սա        | -ին սին           | -ա + սա = սա<br>-ա + սա = սա<br>-ա + սա = սա | -ին + սին = սին                |
| Սի(մ)<br>սիս, սա  սա,<br>սին(մ), սիկ,<br>սին               | I      | -էյ(ինք) սէյնք(մք) | էյնք սէյնք(մք)    | -էյ + սէյ(նք) =<br>= սէյնք(մք)               | -էյնք + սէյնք =<br>= սէյնք(մք) |
|                                                            | II     | էյ(ր) սէյր         | էյ(ր)ք սէյր       | էյ(ր) + սէյր = ս'յր                          | էյր + սէյր = սէյր              |
|                                                            | III    | էր սէր             | էն (սէյ)ն         | էր + սէր = սէր                               | էն + սէն = սէն                 |

Հարկադրական եղանակի բայաձևերը ունենում են լրացուցիչ հարադրություն, որն անպայման պետք է արտահայտվի ըղձական եղանակի ժամանակաձևերով, որոնք խոսողի համար դառնում են նպատակ, պայման, հետևանք և այլ հարաբերություններ և որոնք չեն կատարվել, մնում են անավարտ գործողության սահմաններում:

Հարկադրական եղանակի բայաձևերը խոնարհվում են ըղձական եղանակի նման՝ սկզբից ստանալով բրդի եղանակիչը:

Օրինակ՝

Բրդի գարգենք սէնք սաղկըծուցենք.

Բրդի հասնենք սէնք ք'ընենք սէնք.

Բրդի մօտենայ սէյր էրեք սէր:

Ժխտական խոնարհման դեպքում եղանակային բոլոր ձևերը վերածվում են պայմանականի, ինչպես՝ գելնիմ սի-չէլնիմ սի, կրսիմ սի-չրսիմ սի, կրեսնենք սէր, չրե տեսնէ սէր:

Սի(մ) օժանդակ բայը, հաջորդելով խոնարհված բայաձևերին, բարբառի հնչյունական օրենքների համաձայն կրել է հետևյալ փոփոխությունները:

1) Եզակի թվի առաջին դեմքի բայաձևերի վերջին մ-ն և սի(մ) օժանդակ բայի վերջին մ-ն, լինելով նույն դիմաթվանիշ մասնիկները, հանդիպադրվել են միմյանց, առաջին մ-ն մթագնել է և միավորվել երկրորդի մեջ, ինչպես՝ կէրսամ սիմ—կէրտասիմ, գրհասնիմ սի(մ)—գրհասնիսիմ, կըխըպում սիմ—կըխըպուսիմ: Բացառված չէ նաև երկրորդ ցուցիչի մթագնումը, ինչպես՝ գրգարգիմ սիմ—գրգարգիմսի, կրսիմ սիմ—կրսիմսի, կըմէռում սիմ—կըմէռուսի:

2) Եզակի թվի երկրորդ դեմքի վերջին ա-ն, լինելով նույն դիմաթվանիշ ցուցիչը, հանդիպադրվել է սիս օժանդակ բայի հետ և առաջին ա-ն մթագնել է

կամ միավորվել, ինչպես՝ գրգռագիս սիս—գրգռագի սիս, կրմոդգրնաս սիս—կրմոդգրնաս սիս, կրթրկուս սիս—կրթրկուս սիս և այլն:

3) եղակի թվի երրորդ դեմքի սի-ն դառնում է սալլսն:

4) Հոգնակի թվի առաջին դեմքի նվմ մասնիկներից մեկն է գործածական դարձել խոսքի մեջ, բացարձակ առավելությունը նվ-ի կողմն է, ինչպես՝ գրհասնիս սիս(նվ)—գրհասնիսիս, կրմոնանվ (մվ) սիս(մվ)—կրմոնանսիս, կրթրկուս սիս(մվ)—կրթրկուսիս և այլն:

5) Հոգնակի թվի երկրորդ դեմքի կ (ֆ) ցուցիչը միավորվում է սիկ մասնիկի մեջ, ինչպես՝ գրհասնիկ սիկ—գրհասնիսիկ, կրպադմիկ սիկ—կպադմիսիկ, կրթրկուս սիկ—կրթրկուսիկ:

6) Հոգնակի բայական վերջավորության երրորդ դեմքի ն-ն մթագնել է սին օժանդակ բայի ն-ի առկայության դեպքում, ինչպես՝ գրվագնին սին—գրվագնիսին, կրխրպուն սին—կրխրպուսին, կրլոդգրնան սին—կրլոդգրնասին:

7) Անցյալի ձևերում նույնպես միացվում են հիմնահնչյունն ս-երը՝ կրմոնանս սա—կրմոնանսա, կրսաս սա—կրսասա:

8) Անկատար անցյալի եղակի թվի առաջին դեմքի յ-ն խոնարհման երկրորդ ձևերում ընկել է, ինչպես՝ գրգարգէյ սէյ—գրգարգէսէյ, կրմոնանյ սէյ—կրմոնանսէյ, կրթրկույ սէյ—կրթրկուսէյ և այլն:

9) Երկրորդ դեմքի -յր մասնիկները միանում են, ինչպես՝ գրգարգէյր սէյր—գրգարգէսէյր, կրմոնանյր սէյր—կրմոնանսէյր, կրթրկույր սէյր—կրթրկուսէյր և այլն, որը քերականական հնաբանություն է:

10) Երրորդ դեմքի -ր մասնիկը միանում է, ինչպես՝ գրհասնէր սէր—գրհասնէսէր, կրմոնանր սէր, կրմոնանսէր, կրթրկուր սէր—կրթրկուսէր:

#### Եղրականություն

1) Իսկ Ալաշկերտի խոսվածքում եմ (իմ) խոնարհմանը զուգահեռ հանդես է գալիս սի(մ) օժանդակ բայը, որն արտահայտում է խոսողի տարբեր վերաբերմունքը գործողության կատարման նկատմամբ և կազմում նոր եղանակներ՝ սահմանականային-ըղձական, ըղձականային-սահմանական, հարկադրականային-սահմանական:

2) Խոսքի եղանակավորումը բայական առումով խիստ կարևոր է, հետևապես՝ սիմ խոնարհման բայաձևերը արժեքավորում են հաստատականություն և գործողության անվերապա՝ կատարում, իսկ ժխտական ձևերում՝ սահմանականի ոլորտից դուրս են գալիս և դառնում պայմանական:

3) Սի(մ) օժանդակ բայով կազմված նախադասություններն իրենց մեջ պարունակում են այնպիսի թաքնված նախադասություններ, որոնցից մնացել է միայն բայական հատկանիշը, որը, դեմքով ու թվով համաձայնվելով բուն բայի հետ, նախադասության մեջ ցույց է տալիս լեզվական որոշ իրավունքներին ենթակայություն սուբյեկտի նկատմամբ:

#### 2. Սի (si) ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻՉ

Պայմանական եղանակի բայաձևերը կ[>կը, կ, գը, գ]-ի փոխարեն երբեմն ստանում են սի (si) «եթե» ետադաս եղանակիչը, որը հանդես գալու է դեպքում եղանակային բայաձևերն արտահայտում են ոչ միայն պայմանա-

կան, այլև գործողության ստույգ կատարման անմիջականություն, անհրաժեշտաբար կատարվող գործողության հրաման-հորդորանքի տարբեր դրսևորումներ. օրինակ՝ կըսիմ (ասում եմ.—սահմանական), կըսիմ սի (ասում եմ+ասեմ.—սահմանական+ըղծական), ըսիմ սի (կասեմ.—պայմանական), կըտեսնիմ (տեսնում եմ.—սահմանական), կըտեսնիմ սի(մ) (տեսնում եմ+տեսնեմ.—սահմանական+ըղծական), տեսնիմ սի (կտեսնեմ.—պայմանական), կըթըկում (թքում եմ.—սահմանական), կըթըկում սի(մ) (թքում եմ+թքեմ.—սահմանական+ըղծական), թըկում սի (կթքեմ.—պայմանական):

Ինչպես ցույց են տալիս նշված օրինակները, այս եղանակիչը հիմնականում հանդես է գալիս ըղծական եղանակի բայաձևերի հետ, սակայն, երբեմն գրվելով սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակային ձևերի վրա, նրանց հաղորդում է կրկնակի պայմանականի իմաստ:

Այս դեպքում բայաձևերը ձեռք են բերում պայմանականությունից զուրկ մերձավոր ապառնի եղանակաժամանակային դրսևորումներ, սակայն դա բացարձակ չէ, այլ գոյացել է սի(մ) օժանդակ բայի ակզեցության տակ:

Բարբառի սի եղանակիչն այս դեպքում նման է անգլերենի 1f, մանավանդ ֆրանսերենի *sif* «եթե» պայմանականի իմաստով գործածվող բայամասնիկին, լեհերենի *yesei*, որից կազմված է *est* եզակի թվի 3-րդ դեմքի վերջավորություն և *ei* «եթե» մասնիկի համադրումով, հմմտ. ռուսերենի *если* «եթե» շաղկապը<sup>8</sup>:

Ֆրանսերենի համեմատությունը կատարենք ըստ Հ. Աճառյանի բերած օրինակի՝ *Je le dirai si je le vois* «Կասեմ, երբ տեսնեմ»<sup>9</sup>:

Մեծ լեզվաբանը հայերենի գրական լեզուներից իր ձեռքի տակ համապատասխան փաստեր չունենալով, այն թարգմանել է՝ «Կասեմ, երբ տեսնեմ», մինչդեռ բուն Ալաշկերտի խոսվածքով թարգմանվում է այսպես՝ «Տեսնիմ սի՝ կըսիմ»:

Բուն Ալաշկերտի ետադաս սի եղանակիչն իր իմաստային դրսևորումներով շփման եզրեր ունի նաև Պոլսի, Նոր Նախիջևանի, Համշենի բարբառներում գործածական ճե-ով և գրաբարում ու միջին հայերենում հանդես եկող թէ կամ եթէ շաղկապներով կազմված թեական եղանակի բայաձևերի հետ:

Աճառյանը Պոլսի բարբառի ճե-ի ծագումն իրավամբ կապում է միջին հայերենի նա-ի հետ, նկատելով, որ «միջին հայերենը ունի մի նոր ձև, որ շկա գրաբարում: Այդ այն է, որ թեական նախադասության հաջորդող գլխավոր նախադասության սկիզբը գնում է նա կամ նայ:

... Այս նա, նա ապա կամ նա անա կարելի է արդի լեզվով թարգմանել «ուրեմն, ապա ուրեմն» բառերով»<sup>10</sup>: Նէ-ն աստիճանաբար կորցրել է իր դերանվանական իմաստը, վերածվել է մասնիկի և «կցվում է բայական բո-լոր պարզ, բարդ և բաղադրյալ ձևերին (բացի հրամայականից և դերբայներից) և տալիս է նրանց թեական իմաստ»<sup>11</sup>:

Դիտարկելով բարբառային փաստերը, Հ. Աճառյանը գալիս է այն եզրակացության, որ այս «ճե մասնիկը ունի նաև մի ուրիշ գործածություն:

<sup>8</sup> Հմմտ. Этимологический словарь русского языка, том. I, вып. 5, М., 1973, стр. 264.

<sup>9</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ գիրք, էջ 129:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 241—242:

<sup>11</sup> Նույն տեղում:

Նշանակում է մի այնպիսի միջակ կամ գործողություն, որի մասին խոսողը բոլորովին վստահ է և ուզում է խոսակցի սխալը հերքել:

Օրինակ՝

— Աղէգ գիղէմ օր անիգա գօխծած չէ:

— է, էս աշկօվս դէսա նէ»<sup>12</sup>:

Բուն Ալաշկերտի խոսվածքի մեջ պայմանական եղանակն ունի խոնարհման հետևյալ պատկերը:

#### ա պ ա ռ ն ի

|           |           |           |            |
|-----------|-----------|-----------|------------|
| տեսնիմ սի | տեսնիր սի | մօռնամ սի | մօռնանք սի |
| տեսնիս սի | տեսնիր սի | մօռնաս սի | մօռնաք սի  |
| տեսնա սի  | տեսնին սի | մօռնա սի  | մօռնան սի  |

#### ա ն ց լ ա ա պ ա ռ ն ի

|             |             |            |             |
|-------------|-------------|------------|-------------|
| տեսնէյ սի   | տեսնէյնք սի | մօռնայ սի  | մօռնէյնք սի |
| տեսնէյր սի  | տեսնէյք սի  | մօռնայր սի | մօռնէյք սի  |
| տեսնէ(ր) սի | տեսնէն սի   | մօռնէր սի  | մօռնէն սի   |

Ուրեմն՝

ա) սի (si) եղանակիչը, դրվելով ընթացիկ եղանակի բայաձևերի վրա, նրանց հաղորդում է պայմանականության իմաստ՝ «եթե», «երբ», որ»:

բ) այս եղանակիչը չի խոնարհվում, հետևապես, դեմքով և թվով չի համաձայնվում իրեն նախորդող բայաձևերի հետ:

գ) սի-ի գործածության դեպքում կ[>կը, կ, գը, գ] նախադրային մասնիկները չեզոքանում են, որովհետև խոսքի պայմանականությունը իր մեջ լիովին ներառում է ետադաս բառ-մասնիկը և փոխարինում ու ծածկում է նույն արժեքը:

#### ОБ ОСОБЕННОСТИ ВСПОМОГАТЕЛЬНОГО ГЛАГОЛА В АЛАШКЕРТСКОМ ДИАЛЕКТЕ

С. М. СААКЯН

(Резюме)

Исходя из основных положений А. Мейе, Р. Ачаряна, Г. Капанцяна, А. Абраамяна, которые рассматривали арм. *ei* как вспомогательный глагол или инфинитив, мы связываем происхождение алашкертского вспомогательного глагола *si(m)* с и.-е. *\*esmi* и рассматриваем в статье систему спряжения *si(m)* параллельно с *em/im*, а также историческое развитие глагола *sim*, который потерял диспозиционное положение, став местоименной частицей составного глагола (глагол→местоимение→частица), и изменения во взаимоотношениях наклонений (изъяв.+желат., желат.+изъяв., повелит.+изъяв.). Далее исследуются формы условного наклонения глагольной частицы (последлог), противопоставленной в плане выражения глагольному предлогу *k(>kə, k, gə, g)*. Интересно отметить, что форма *si* встречается во многих и.-е. языках.

12 2. Ա ճ ա ռ ն ի, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 139: